ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
<<ՇԱՄԲԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Շամբ
Հեռախոս՝ 093005958
Էլ.Հասցե՝ shamb@schools.am
09 սեպտեմբեր 2021 թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար պարոն՝
Էդգար Մարտիրոսյանին

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2021թ.-ի սեպտեմբերի 24-ին ժամը 12՝՝-ին տեղի է ունենալու ուսուցչի /դասավար/,տեխնոլոգիա 5-7-րդ դասարաններ տղաների և կերպարվեստի թափուր տեղերի մրցույթ, ուստի խնդրում ենք ապահովելու ներկայացուցիչի մասնակցությունը:

Հիմք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թ.-ի հուլիսի 30-ի N1001- Ն հրամանի գլուխ I-ի կետ 7-ը:

Տնօրեն Սամվել Զաքարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի Շամբի միջնակարգ դպրոցի / ՊՈԱԿ/ դասվարի(2-րդ դասարան՝ 10 ժամ,0,5 դասվար) , <<Տեխնոլոգիա>> (տղաներ ՝ 2,5 ժամ),<<Կերպարվեստ>>(1,5 ժամ) առարկաների թափուր աշխատատեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում ,ամեն օր՝ ժամը՝ 9:00-ից 14:00 –ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 24 -ին ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Շամբի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /093 00 59 58/ հեռախոսահամարով: